

# Երկնագույն կարբունկուլը

## հեղինակ՝ Արթուր Կոնան Դոյլ

Թարգմանիչ՝ Վ. Տայան

Ծննդյան տոնի երրորդ օրը ես գնացի բարեկամիս՝ Շերլոկ Հոլմսին շնորհավորելու: Կարմիր խալաթը հագին, նա պառկած էր գահավորակի վրա՝ աջ կողմը ծխախոտով լցված մի քանի ծխամորձ, իսկ ձախ կողմը՝ առավոտյան լրագրերի մի կույտ, որը, ըստ երեւոյթին, հենց նոր էր աչքի անցկացրել: Գահավորակի կողքին դրված էր մի աթոռ, որի թիկնակից կախված էր թաղիքե հնամաշ եւ ծակծկված խղճուկ մի շյապա: Հոլմսը, հավանաբար շատ ուշադիր էր ուսումնասիրել այդ գլխարկը, քանի որ հենց այդտեղ՝ աթոռի նստելատեղին ընկած էին պինգետն ու խոշորացույցը:

— Դուք զբաղված եք, — ասացի: — Վախենում եմ, որ խանգարեմ ձեզ:

— Ամենեւին, — պատասխանեց նա: — Ուրախ եմ, որ ընկեր կա, ում հետ կարող եմ զրուցել իմ հետազոտությունների արդյունքների մասին: Ինչպես տեսնում եք, այս իրը շատ սովորական է, — նա բութ մատով ցույց տվեց հին գլխարկը, — բայց սրա հետ կապված են մի քանի ուշագրավ դեպքեր, որոնք զուրկ չեն նույնիսկ որոշ ուսանելի կողմերից:

Ես նստեցի բազկաթոռին և սկսեցի ձեռքերս տաքացնել բուխարիկի մոտ, որտեղ ճարճատում էր կրակը: Ուժեղ սառնամանիք էր. լուսամուտները ծածկվել էին սառցե զարդանկարների թանձր շերտով:

— Թեև այս գլխարկը շատ հասարակ տեսք ունի, բայց երևի կապված է որևէ արյունալի պատմության հետ, — նկատեցի ես: — Հավանաբար դա կձառայի որպես բանալի ինչոր սարսափելի գաղտնիքներ բաց անելու համար, և դրա շնորհիվ ձեզ կհաջողվի մերկացնել ու պատժել հանցագործին:

Շերլոկ Հոլմսը ծիծաղեց:

— Ո՛չ, ո՛չ, — ասաց նա, — ոչ թե հանցագործություն, այլ մանր, ծիծաղելի մի էպիզոդ է, որ միշտ էլ կարող է պատահել այսպիսի մի տեղ, ուր չորս միլիոն մարդ խոնված է մի քանի քառակուսի մղոն տարածության վրա: Մարդկային այսպիսի մի վիթխարի փեթակում միշտ էլ հնարավոր են փաստերի ուզածդ կոմբինացիաները,

որոնք չափազանց առեղծվածային լինելով հանդերձ, այնուամենայնիվ իրենց մեջ որևէ հանցագործություն չեն թաքցնում: Մեզ արդեն վիճակվել է նման դեպքերի հետ գործ ունենալ:

— Եվ այն էլ ոնց է պատահել, — բացականչեցի ես: — Նկարագրա՞ծս վերջին վեց միջադեպերից երեքը ոչ մի անօրեն բան չէին պարունակում:

— Միանգամայն ճիշտ է: Չեմ կասկածում, որ այս չնչին դեպքը ևս նույնքան անմեղ դուրս կգա: Դուք Պետերսընին ճանաչո՞ւմ եք, թղթատարին:

— Այո՛:

— Այս ավարը նրան է պատկանում:

— Այսինքն՝ սա նրա շյապա՞ն է:

— Ո՛չ, ո՛չ, նա գտել է: Գլխարկի տերն անհայտ է: Փորձեցեք սրան նայել ոչ թե հնոտիի տեղ դնելով, այլ իբրև լուրջ մի խնդրի. . . Ամենից առաջ ձեզ պատմեմ, թե այս գլխարկն ինչպես է ընկել այստեղ: Սա հայտնվեց ծննդյան տոնի առաջին օրը հրաշալի, յուզոտ մի սագի հետ միասին, որը հենց հիմա տապակվում է Պետերսընի խոհանոցում: Դեպքն այսպես է եղել: Ծննդյան տոնի օրը, առավոտյան ժամը չորսին, Պետերսընը, որն, ինչպես գիտեք, մի ազնիվ ու պատվաժան մարդ է, խնջույքից տուն վերադառնալիս է եղել ՏոտենհեմԿոորտրոդ փողոցով: Գազային լապտերի լույսով նա նկատել է, որ իր առջևից, թեթևակի ճոճվելով, գնում է ինչոր մի բարձրահասակ անձնավորություն և ուսին դրած տանում է ձյունափայլ մի սագ: Հուշատրիտի անկյունում անձանոթի հետևից են ընկել խուլիզանները: Նրանցից մեկը խփելգցել է նրա գլխարկը: Պաշտպանվելու համար անձանոթը ձեռնափայտը բարձրացրել է, որ խփի և պատահաբար դիպցրել է իր թիկունքում գտնվող խանութի ցուցափեղկին: Ապակին փշուրփշուր է եղել: Պետերսընը նետվել է առաջ, որ օգնի անձանոթին, բայց ապակին ջարդելուց ցնցված դժբախտը հենց որ տեսել է իր կողմը վագոդ մարդուն, սագը ցած է գցել ու ինչքան ոտքերում ուժ կար՝ սլացել է առաջ և անհետացել ՏոտենհեմԿոորտրոդի հետևն ընկած ոչ մեծ նրբանցքների լաբիրինթոսում: Պետերսընը եղել է համազգեստով, և հենց դա էլ, հավանաբար, ամենից շատ է վախեցրել փախստականին: Եվ որովհետև Պետերսընի հայտնվելու հետ միասին խուլիզանները փախել են դեռ ու դեն, թղթատարը մարտի դաշտում մնացել է մենակ և դարձել տերն այն բարիքի, որ բաղկացած է այս հիշարժան շյապայից ու մի ընտիր սագից. . .

— . . . որը Պետերսընը, իհարկե, վերադարձրել է անձանոթին:

— Այ, հենց հանելուկն էլ դա է, սիրելիս: Ո՞վ է այդ անձանոթը և որտե՞ղ է ապրում: Ճիշտ է, սագի ձախ ոտքին կապած փոքրիկ քարտի վրա գրված էր «միսսիս»

Հենրի Բեյքըր», ճիշտ է և այն, որ անվան «Հ. Բ.» սկզբնատառերը հնարավոր է նշմարել այս գլխարկի աստառի վրա: Բայց քանի որ քաղաքում մի քանի հազար Բեյքըրներ են ապրում ու դրանց թվում մի քանի հարյուր Հենրի Բեյքըրներ, հեշտ չէ կորցրած սեփականությունը վերադարձնել նրանցից մեկնումեկին:

— Իսկ ի՞նչ արեց Պետրսընը:

— Նա պարզապես այստեղ բերեց և՛ սագը, և՛ գլխարկը, գիտենալով, որ ինձ զբաղեցնում է նույնիսկ ամենաչնչին հանելուկների լուծումը: Սագը մենք պահեցինք ընդհուպ մինչև առավոտ, երբ պարզ դարձավ, որ, չնայած սառնամանիքին, ավելի լավ է սագին ուտել՝ առանց հետաձգելու: Պետերսընը սագը տարավ ու փառավորապես հյուրասիրվեց, իսկ ինձ մոտ մնաց ծննդյան տոնի իր ընթրիքը կորցրած անձանոթի գլխարկը:

— Նա լրագրում հայտարարություն չի՞ տվել:

— Ոչ:

— Հապա ինչպե՞ս կիմանաք, թե ով է նա:

— Միայն խորհրդածությունների միջոցով:

— Խորհրդածություններ այս շյապայի հայտնվելու հիման վրա՞:

— Իհարկե:

— Կատակ եք անում: Ի՞նչ կարելի է դուրս քաշել այս հին, պատառոտված թաղիքից:

— Ահա իմ խոշորացույցը: Վերցրեք և այս գլխարկի նկատմամբ փորձեցեք կիրառել իմ մեթոդը: Չէ՞ որ դա ձեզ քաջ հայտնի է: Ի՞նչ կարող եք ասել այն մարդու մասին, որին պատկանում էր այս գլխարկը:

Ես վերցրի պատառոտված գլխարկն ու ձանձրույթով շուռումուռ տվի: Ամենաստվորական, սև ու կլոր մի շյապա էր դա, կոշտ, չափից դուրս մաշված: Մետաքսե աստառը մի ժամանակ կարմիր է եղել, բայց հետո գույնը գցել է: Ֆաբրիկայի դրոշմը ես չկարողացա գտնել, բայց, ինչպես և ասել էր Հովմար, ներսը՝ կողքի վրա երևում էին անվան և ազգանվան սկզբնատառեր՝ «Հ. Բ»: Եզրին ես նկատեցի փոքրիկ մի ծակ՝ գլխարկը պահող ռետինե կապի համար, բայց կապը չկար: Ընդհանրապես գլխարկը պատառոտված էր, կեղտոտ ու բծերով ծածկված, բայց և այնպես նկատելի էին բծերը թանաքով ծածկելու փորձեր:

— Ոչ մի բան չեմ տեսնում այստեղ, — ասացի ես, գլխարկը վերադարձնելով Շերլոկ Հոլմսին:

— Ոչ, Ուոտսըն, դուք ամեն ինչ տեսնում եք, բայց ձեզ նեղություն չեք տալիս խորհրդածելու այն բանի մասին, ինչ տեսնում եք: Դուք չափազանց անհամարձակ եք ձեր տրամաբանական դատողությունների մեջ:

— Այն դեպքում խնդրեմ ասացեք, թե այս շյապան զննելուց ի՞նչ եզրակացություն եք անում դուք:

Հոլմսը ձեռքն առավ գլխարկն ու միայն իրեն հատուկ թափանցող հայացքով սկսեց խորագնին դիտել:

— Իհարկե, այստեղ ամեն ինչ չէ, որ բավականաչափ պարզ է, — նկատեց նա, — բայց որոշ բաներ կարելի է առանց սխալվելու հաստատել, իսկ որոշ բաներ մեծ հավանականությամբ ենթադրել: Միանգամայն ակնհայտ է, օրինակ, որ սրա կրողը մեծ խելքի տեր մարդ է և որ երեք տարի առաջ նա կարգին փող է ունեցել, իսկ այժմ սև օրեր են եկել նրա համար: Նա միշտ կանխատեսող է եղել, միշտ հոգ է տարել վաղվա մասին, իսկ հիմա մի փոքր վհատվել է: Քանի որ նրա կյանքն առաջվա պես բարվոք չէ, մենք իրավունք ունենք ենթադրելու, որ նա սկսել է զբաղվել որևէ կորստաբեր արատով, կարող է պատահել հարբեցողությամբ: Հավանաբար հենց դրա համար էլ կինն այլևս չի սիրում նրան. . .

— Իմ Հո՛լմս, սիրելի՛ս. . .

— Բայց և այնպես նա որոշ չափով դեռ պահպանել է իր արժանապատվությունը, — շարունակեց Հոլմսը, ուշադրություն դարձնելով իմ բացականչությանը: — Նա նստակյաց կյանք է վարում, հազվադեպ է դուրս գալիս տնից, սպորտով ամենևին չի զբաղվում: Միջին տարիքի մարդ է, սպիտակած, մազերին ներկ է քսում և վաղուց չէ, որ խուզվել է: Այս բոլորի վրա կարող եմ ավելացնել, որ նրա տանը գազային լուսավորություն չկա:

— Դուք, իհարկե, կատակում եք, Հո՛լմս:

— Ամենևին: Մի՞ թե նույնիսկ այժմ, երբ ձեզ ամեն ինչ պատմեցի, դուք չեք հասկանում, թե ինչպես իմացա այդ բոլորը:

— Ուզում եք՝ ինձ ապուշ համարեցեք, բայց պետք է խոստովանեմ, որ ես ի վիճակի չեմ հասնել ձեր մտքերի ընթացքին: Օրինակ, ինչի՞ ց իմացաք, որ այդ մարդը շատ խելացի է:

Պատասխանի փոխարեն Հոլմսը շյապան քաշեց գլուխը: Գլխարկը ծածկեց նրա ճակատն ու դեմ առավ քթարմատին:

— Տեսնո՞ւմ եք ինչպիսի խորանարդային չափեր են, — ասաց նա: — Չի կարող բոլորովին դատարկ լինել այսքան մեծ ուղեղը:

— Լավ, իսկ ինչի՞ց իմացաք, որ նա աղքատացել է:

— Այս գլխարկը երեք տարեկան է: Ծայրերը ոլորված տափակ եզրերն այն ժամանակ շատ ընդունված էին: Շյապան բարձրորակ է: Մի նայեք այս մետաքսի ժապավենին, այս հիանալի աստառին. . . Եթե երեք տարի առաջ այդ մարդը ի վիճակի էլ գնել այսքան թանկարժեք գլխարկ, ու այդ օրվանից չգնել և ոչ մեկը, միանգամայն պարզ է, որ նրա գործերը լավ չեն գնացել:

— Դե լավ, այդ հարցում, թերևս ճշմարիտ եք. բայց որտեղի՞ց իմացաք, որ նա կանխատեսող մարդ է և որ ներկայումս հոգեկան անկում է ապրում:

— Ահա այդ կանխատեսությունը, — ասաց բարեկամս ցույց տալով փոքրիկ ծակը ռետինե կապի համար: — Ռետինե կապեր երբեք գլխարկների հետ չեն ծախում, դրանք առանձին պիտի գնել: Երբ որ այդ մարդը ռետինե կապ է գնել ու կարգադրել ամրացնել գլխարկին, նշանակում է, նա մտահոգվել է, որ քամին շյապան չթոցնի: Բայց ռետինե կապը կտրվել է, և նա նորը չի սարքել, իսկ դա նշանակում է, որ այդ մարդն առաջ հոգացել է իր արտաքինի մասին, իսկ այժմ վիատվել է և, այսպես ասած, ձեռք քաշել իրենից: Սակայն մյուս կողմից նա փորձել է գլխարկի վրայի բծերը քողարկել՝ ներկել թանաքով, ուրեմն նա սեփական արժանապատվության զգացումը դեռևս լրիվ չի կորցրել:

— Այս ամենը ճշմարտության շատ նման է:

— Որ նա միջին տարիքի մարդ է, որ սպիտակած է, որ նա վաղուց չէ, ինչ մազերը խուզել է, որ մազերը ներկում է, — այս բոլորը պարզ է դառնում, եթե ուշադիր զննում ենք գլխարկի աստառի ցածի մասը: Խոշորացույցով տեսանելի են աստառին կպած մազերը, որ կրտվել են վարսավիրի մկրատով: Այդ բոլոր մազերից ներկի հոտ է գալիս: Նկատի ունեցեք, որ գլխարկի փոշին փողոցի չէ՝ գորշ ու ավազային, այլ տան փոշի է՝ թուխ է, փափուկ: Նշանակում է՝ գլխարկը մեծ մասամբ տանն է կախված եղել: Իսկ ներսի կողմի խոնավության հետքերը խոսում են այն մասին, թե գլխարկի տերն ինչքան շատ է քրտնում, որովհետև շարժումներ անելուց խամացել է:

— Հապա ինչպե՞ս իմացաք, որ կինը դադարել է նրան սիրելուց:

— Գլխարկը մի քանի շաբաթ չի մաքրվել: Եթե ես տեսնեի, իմ սիրելի Ուո՛տսըն, որ ձեր շլայպան թեկուզ մի շաբաթ չի մաքրվել, և որ ձեր կինը թույլ է տալիս այդ տեսքով դուրս գալ տնից, կսկսեի տարակուսել, որ դուք էլ եք դժբախտություն ունեցել կորցնելու ձեր տիկնոջ բարեհաճությունը:

— Է՛, գուցե այդ մարդն ամուրի՞ է:

— Ոչ, նա սազը տուն էր տանում հենց նրա համար, որ կնոջը սիրաշահի: Հիշեցեք այն քարտը, որ կապված էր այդ թռչնի ոտքին:

— Դուք ամեն ինչի պատրաստի պատասխան ունեք: Իսկ ինչի՞ց իմացաք, որ նրա տանը գազ չկա:

— Ճարպի մեկերկու բիծը գլխարկի վրա՝ պատահականություն է: Բայց երբ ես տեսնում եմ ճարպի հինգից ոչ պակաս բծեր, կարող եմ չկասկածել, որ այդ մարդն ստիպված է հաճախ օգտվել մոմից, հավանաբար գիշերը բարձրանալ սանդուղքով, մի ձեռքին շյապան, իսկ մյուսով հալչող մոմը բռնած: Համենայն դեպս, գազից ճարպի հետքեր չեն մնում. . . Հիմա դուք համաձայն եք իմ ասածներին:

— Այո՛, այդ բոլորը շատ հասարակ բաներ են, — ծիծաղելով ասացի ես: — Բայց այն, ինչ պատմեցիք, դեռևս հանցագործություն չի պարունակում: Սազը կորցրած մարդուց բացի, ոչ ոք վնաս չի կրել, ոչ ոք, և, ուրեմն, դուք իզուր տեղն եք գլուխ տրաքացրել:

Հենց այն է, Շերլոկ Հոլմսն ուզում էր բերանը բաց անել, որ պատասխան տա, երբ սենյակի դուռը կրնկի վրա բացվեց ու ներս ընկավ թղթատար Պետերսընը տազնապահար ու վրդովված: Նրա այտերը բռնացիորեն վառվում էին:

— Սազը, մի՛ սոր Հոլմս, սազը բա՛, — շնչակտուր գոչեց նա:

— Հը՞, ի՞նչ է պատահել նրան: Չլինի՞ թե կենդանացել է ու խոհանոցի լուսամուտից դուրս թռել:

Գահավորակին նստած Հոլմսը շուռ եկավ, որպեսզի ավելի լավ տեսնի Պետերսընի գրգռված դեմքը:

— Տեսեք, սը՛ր, տեսեք, թե կինս ինչ գտավ սազի քուջի մեջ:

Նա պարզեց ձեռքը, և նրա ավիում մենք տեսանք պայծառորեն շողշողացող երկնագույն մի քար՝ սիսեռից քիչ փոքր: Քարն այնքան գուլալ էր, որ թուխ ավիի վրա լույս էր տալիս, ինչպես էլեկտրական կայծը:

Հոլմսը շվացրեց ու ընկավ գահավորակին:

— Ազնիվ խոսք, դուք գանձ եք գտել Պետերսըն, — ասաց նա: — Հուսով եմ, որ դուք հասկանում եք չէ՞, թե ինչ է սա:

— Ադամանդ է, սը՛ր, թանկագին քա՞ր: Ապակին այնպես է կտրում, ոնց որ կարագ կտրի:

— Սա ոչ թե սովորական թանկագին քար է, այլ հենց այն թանկագին քարն է:

— Մի՞ թե սա կոմսուհի Մորկարի երկնագույն կարբունկուլն<sup>[1]</sup> է, — գոչեցի ես:

— Միանգամայն ճիշտ է: Ես գիտեմ, թե ինչպիսին է այն, որովհետև վերջին ժամանակներս ամեն օր հայտարարություններ էի կարդում «Թայմս» լրագրում: Այդ քարն իր տեսակի մեջ միակն է, և միայն կարելի է գլխի ընկնել, թե որն է դրա իսկական գինը: Հազար ֆունտ պարզևր, որ առաջարկում են գտնողին, հազիվ թե դրա արժեքի մեկ քսաներորդ մասը լինի:

— Հազար ֆո՞ւնտ. . . Աստվա՛ծ իմ. . .

Թղթատարը թրմփալով ընկավ բազկաթոռի մեջ, աչքերը ապշահար չռելով մեկ ինձ վրա, մեկ Հոլմսի:

— Պարզևր՝ պարզև, — ասաց Հոլմսը, — բայց ես հիմք ունեմ կարծելու, որ որոշ նկատառումներով կոմսուհին կտա իր ամբողջ հարստության կեսը, միայն թե վերադարձնի այս քարը:

— Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, այս քարը կորել է «Կոսմոպոլիտեն» հյուրանոցում, — նկատեցի ես:

— Միանգամայն ճիշտ է, դեկտեմբերի քսաներկուսին, ուղիղ հինգ օր առաջ: Այս քարի գողության մեջ մեղադրվեց գողող Ջոն Հորները: Նրա դեմ եղած ապացույցներն այնքան լուրջ են, որ գործն ուղարկված է դատարան: Կարծեմ ինձ մոտ այդ գործի վերաբերյալ լրագրային հաշվետվություն կա:

Շերլոկ Հոլմսը երկար ժամանակ ինչոր բան էր փնտրում լրագրերում. վերջապես հանեց նրանցից մեկը, երկտակ ծալեց ու կարդաց հետևյալը:

### **Թանկագին իրերի գողություն «Կոսմոպոլիտեն» օտելում**

*Ջոն Հորներ, 26 տարեկան, գողող, մեղադրվում է այն բանում, որ սույն ամսի 22-ին կոմսուհի Մորկարի զարդատուփից հափշտակել է թանկագին մի քար, որը հայտնի է «երկնագույն կարբունկուլ» անունով: Օտելի ավագ սպասավոր Ջեյմս Ռայդըրը ցուցմունք տվեց, որ գողության օրը Հորներին տեսել է կոմսուհի Մորկարի զուգարանում, որտեղ սա դողելիս է եղել բուխարիկի ցանցի թուլացած ձողը: Որոշ ժամանակ Ռայդերը Հորների հետ մնացել է սենյակում, բայց հետո առաջինին կանչել են: Վերադառնալով, նա տեսել է, որ Հորներն անհետացել է, բյուրոյի դարակը կոտրած է, և ինչպես հետագայում է պարզվել, սեկի փոքրիկ պատյանը, որի մեջ կոմսուհին սովորություն ուներ պահել թանկագին քարը, դատարկ ընկած է զուգասեղանին: Ռայդըրն անմիջապես տազնապ է ազդարարել, և հենց նույն երեկոյան Հորները ձերբակալվել է: Սակայն քարը չի գտնվել ոչ նրա մոտ, ոչ էլ նրա սենյակում: Կոմսուհու նաժիշտը՝ Կետրին Կյուզեկը, ցուցմունք է տվել, որ լսելով*

*Ռայդրրի աղեկտուր ճիշտ, ինքն էլ է վազել սենյակ և նույնպես տեսել, որ քարն անհետացել է: Ոստիկանության տեսուչ Բրեդստրիտը, «Բ» օգրուզից, հրաման է տվել ձերբակալել Հորներին, որը բռն կերպով դիմադրում էր և տաքացած ապացուցում, որ ինքն անմեղ է: Բայց որովհետև Հորներն առաջներում էլ է դատվել գողության համար, դատավորը հրաժարվել է քննել այդ գործը և այն հանձնել է երդվյալների դատարանին: Հորները որն անվերջ ուժգին տազնապի նշաններ էր ցույց տալիս, այդ որոշման պահին ուշագնաց է եղել ու դատարանի դահլիճից դուրս տարվել:*

— Հը՛մ. . . Ահա և բոլոր ոստիկանական տեղեկությունները, — մտախոհ ասաց Հովմար, մի կողմ դնելով լրագիրը: — Այժմ մեր խնդիրն է պարզել, թե ինչպես եղավ, որ քարը կոմսուհու սեկյա պատյանից գնաց ընկավ սագի քուրջը: Տեսնո՞ւմ եք, Ուոտսըն, մեր համեստ դատողություններն անսպասելիորեն այնքան էլ անմեղ դուրս չեկան: Սրանք շատ ավելի օգտակար եղան, քան մենք կարծում էինք: Ահա քարը: Այս քարը սագի մեջ էր, իսկ սագը գտնվում էր միստր Հենրի Բեյքըրի մոտ, հալից ընկած գլխարկի այն տիրոջ մոտ, ում անձնավորությունը ես փորձեցի բնութագրել այստեղ, որով և ձեզ անտանելի ձանձրույթ պատճառեցի: Ինչ արած. հիմա մենք պետք է լրջորեն զբաղվենք այդ ջենտլմենին փնտրելով և պարզենք, թե նա ինչ դեր է խաղացել այս խորհրդավոր պատահարի մեջ: Որպեսզի նրան գտնենք, մենք ամենից առաջ կփորձենք ամենահասարակ միջոցը. երեկոյան բոլոր լրագրերում կտպագրենք մի հայտարարություն: Եթե այդ ճանապարհով մենք նպատակներիս չհասնենք, ես ուրիշ միջոցի կդիմեմ:

— Ի՞նչ է ասվելու հայտարարության մեջ:

— Տվեք ինձ մատիտ ու մի պատառ թուղթ: Ահա. «Հուլյանիտի անկյունում գտնված է մի սագ ու սև թաղիքե մի շյապա: Միստր Հենրի Բեյքըրը դրանք կարող է ստանալ այսօր երեկոյան ժամը 6.30ին, Բեյքըստրիտ 221Բում»: Կարճ ու կտրուկ:

— Շատ:

— Իհարկե: Նա հիմա թերթում է բոլոր լրագրերը, որովհետև չքավոր մարդ է և ծննդյան տոնի սագը նրա համար ամբողջ մի կարողություն է: Լսելով փշրվող ապակու զնգոցն ու տեսնելով վազող Պետերսընին, նա այնքան է վախեցել, որ փախել է, չմտածելով ոչ մի բանի մասին: Բայց հետո, իհարկե, նա ափսոսացել է, որ վախից սագը ձեռքից բաց է թողել: Լրագրում մենք հիշատակում ենք նրա անունը, և ամեն մի ծանոթ նրա ուշադրությունը կդարձնի մեր հրապարակած հայտարարության վրա: Այսպես, ուրեմն, Պետերսըն, շուտ վազ տվեք հայտարարությունների բյուրո և այս մի քանի տողը զետեղեցեք երեկոյան լրագրերում:

— Ո՞ր լրագրում, սըր:



— Օ՛... «Գլոբ», «Ստար», «ՊելլՄելլ», «Մենտ Ջեյմս գազետ», «Իվնինգ նյուզ», «Ստենդարդ», «Իկո» և բոլոր մյուս լրագրերում, որը ձեր միտքը կընկնի:

— Լսում եմ, սըր: Իսկ ի՞նչ անեմ այս քարը:

— Հա, ճիշտ որ: Քարը ես կպահեմ ինձ մոտ: Շնորհակալ եմ: Իսկ վերադառնալիս մի սագ գնեցեք ու բերեք այստեղ, Պետերսըն: Չե՞ որ մենք այդ ջենտլմենին պարտավոր ենք մի սագ տալ, այն սագի փոխարեն, որ ներկայումս վայելում է ձեր ընտանիքը:

Թղթատարը գնաց, իսկ Հովսեփը վերցրեց քարն ու սկսեց դիտել՝ լույսի դեմ պահելով:

— Փառավոր քարիկ է, — ասաց նա: — Մի նայեք, թե ինչպես է շողշողում ու կայծկլտում: Ինչպես ամեն մի թանկագին քար, սա նույնպես մագնիսի նման իր կողմն է ձգում հանցագործներին: Այ թե իսկական սատանայի թակա՛րդ է: Մեծ ու հին թանկագին քարերի ամեն մի երեսակը պատմում է որևէ արյունալի չարագործության մասին: Այս քարն իսկի քսան տարեկան էլ չկա: Գտնված է Հարավային Չինաստանում, Ամոյ գետի ափին, և նշանավոր է նրանով, որ ունի կարբունկուլի բոլոր հատկությունները, բացի մեկից, սա ոչ թե սուտակի պես կարմիր է, այլ երկնագույն: Չնայած երիտասարդությանը, սրա հետ արդեն կապված են սարսափելի շատ պատմություններ: Քառասուն գրան[2] քաշ ունեցող այս թափանցիկ ածուխի համար կատարվել են բազմաթիվ կողոպուտներ, երկու սպանություն, մի ինքնասպանություն և ինչոր մեկի վրա էլ ծծմբաթթու են թափել: Ո՞վ կարող էր ասել, որ այս գեղեցիկ զիզիպիզին մարդկանց տանում է դեպի բանտերն ու կախադանները: Ես այս քարը կփակեմ իմ անկիզգելի պահարանում և կոմսուհուն կգրեմ, որ այն պահվում է ինձ մոտ:

— Դուք գտնում եք, որ Հորներն անմե՞ղ է:

— Ոչինչ պնդել չեմ կարող:

— Իսկ այս գործին Հենրի Բեյքըրի մատը խառն է թե՞ ոչ:

— Ամենից ճիշտն այն է, որ Հենրի Բեյքըրն այստեղ ոչ մի մեղք չունի: Կարծում եմ, որ նրա մտքովն էլ չի անցնում, որ այդ սագը եթե մաքուր ոսկուց էլ լիներ, էլի անհամեմատ ավելի էժան կգնահատվեր: Այդ բոլորը շատ շուտով մենք հաստատ կիմանանք, եթե Հենրի Բեյքըրն արձագանքի մեր հայտարարությանը:

— Իսկ մինչ այդ՝ դուք ոչինչ չե՞ք կարող նախաձեռնել:

— Ոչինչ:

— Այդ դեպքում, ես գնում եմ հիվանդներին այցելելու, իսկ երեկոյան՝ նշանակված ժամին, նորից կգամ այստեղ: Ուզում եմ իմանալ, թե ինչով կվերջանա այս խճճված գործը:

— Երջանիկ կլինեմ ձեզ տեսնելով: Ես ճաշում եմ ժամը յոթին: Ճաշին, կարծեմ, կաքավ է լինելու: Ի դեպ, վերջին ժամանակներս տեղի ունեցած իրադարձություններից հետո չխնդրե՞նք արդյոք միասին Հադսընին՝ ուշիուշով գննելու նրա քուրջը:

Ես մի փոքր ուշացա, և յոթն անց կեսից ավելի էր, երբ նորից ընկա Բեյքրաստրիտ:

Մոտենալով դռանը, ես տեսա շոտլանդական գոթակ դրած ու մինչև կզակը կիպ կոճկած սերթուկով մի բարձրահասակ մարդու: Հենց իմ մոտենալու պահին, դուռը բաց արին նրա առջև, ու մենք միաժամանակ մտանք Շերլոկ Հոլմսի սենյակը:

— Եթե չեմ սխալվում՝ միստր Հենրի Բեյքըրն էք, — բազկաթոռից բարձրանալով ասաց Հոլմսը և այցելուին դիմավորեց միամիտսրտաբաց տեսքով, որպիսին կարողանում էր նա ընդունել: — Խնդրեմ, կրակին մոտ նստեք, միստր Բեյքըր: Այս երեկո ցուրտ է, իսկ ինձ թվում է, որ դուք ամռանն ավելի շատ էք դիմանում, քան ձմռանը. . . Մա ձե՞ր շյապան է, մի՞ստր Բեյքըր:

— Այո՛, սը՛ր, դա անկասկած իմ շյապան է:

Բեյքըրը մի խոշոր ու կռացած մարդ էր՝ մեծ գլխով, լայն ու խելացի դեմքով և սրածայր շագանակագույն փոքրիկ մորուքով: Քթի ու այտերի կարմիր բծերը և պարզած ձեռքի թեթևակի դողը հաստատում էին Հոլմսի ենթադրությունը, որ այդ մարդը խմելու հակում ունի: Նրա հագին շեկացած մի սերթուկ կար, որի բոլոր կոճակները ներս գցած էին, իսկ թևերից ցցված լղարիկ ենթադաստակների վրա սպիտակեղենի ոչ մի նշան չէր երևում: Նա խոսում էր խուլ ձայնով ու կցկտուր, ինձամքով ընտրելով բառերը, և ինտելիգենտ մարդու տպավորություն էր թողնում, որին կյանքը խիստ տրորել է:

— Մենք մի քանի օր պահեցինք շյապան ու սազը, որովհետև ամեն օր սպասում էինք, թե դուք լրագրում հայտարարություն կհրապարակեք ձեր հասցեի հետ միասին, — ասաց Հոլմսը: — Չեմ հասկանում, ինչո՞ւ չարեցիք այդ բանը:

Մեր այցելուն շփոթված ժպտաց:

— Ես այնքան էլ շատ շիլինգներ չունեմ, ինչպես լինում էր առաջ, — ասաց նա: — Հավատացած էի, որ ինձ վրա հարձակված խուլիզանները իրենց հետ տարել են և՛ շյապան, և՛ սազը, և չէի ուզում իզուր տեղը փող ծախսել:

— Շատ բնական է: Ի միջի այլոց, ախր մենք ստիպված եղանք ուտել ձեր սազը:

— Ուտե՞լ:

Մեր այցելուն մեծ հուզմունքով մի փոքր բարձրացավ աթոռից:

— Չե՞ որ սազը միևնույն է՝ փչանալու էր, եթե մենք չուտեինք, — շարունակեց Հովմար: — Բայց ես կարծում եմ, որ, ա՛յ, բուֆետի վրայի այն սազը, որ միանգամայն թարմ է և նույն քաշն ունի, կփոխարինի ձեր սազին:

— Օ՛, իհարկե, իհարկե, — թեթևացած շունչ քաշելով, պատասխանեց միստր Բեյքըրը:

— Բայց ձեր թռչունից մեզ մոտ մնացել են փետուրները, տոտիկներն ու քուրջը. այնպես որ, եթե դուք ուզում եք. . .

Բեյքըրը սրտանց քրքրջաց:

— Գուցե որպես իմ արկածի հիշողություն միայն, — ասաց նա: — Իսկապես ասած, չգիտեմ, թե իմ ինչին կարող են պետք զավ հանգուցյալ ծանոթիս եղծանելի մնացորդները: Ոչ, սը՛ր, թողեք ձեր թույլտվությամբ ուշադրությունս կենտրոնացնեմ այն հիանալի սազի վրա, որ ես տեսնում եմ բուֆետին:

Շերլոկ Հովման արագ հայացքներ փոխանակեց ինձ հետ և հազիվ նկատելի վեր քաշեց ուտերը:

— Ահա ձեր շլյապան, ահա ձեր սազը, — ասաց նա: — Ի դեպ, չե՞ք ասի արդյոք, թե որտե՞ղ էիք ճարել այն սազը: Ես որոշ բան հասկանում եմ այդ գործից և, խոստովանում եմ, որ այդքան լավ գիրացած թռչուն հազվադեպ եմ տեսել:

— Սիրով, սը՛ր, — ասաց Բեյքըրը. նա վեր կացավ ու թևի տակ դրեց իր նոր սազը: — Մեր ընկերական ոչ մեծ խումբը հաճախում է «Ալֆա» պանդոկը, որ թանգարանի մոտ է. մենք, հասկանո՞ւմ եք, ամբողջ օրը թանգարանում ենք անցկացնում: Այս տարի մեր պանդոկի տերը՝ Վինդիդետը, որը հիանալի մարդ է, հիմնեց «սագային ակումբ»: Շաբաթական մի քանի պենս վճարելով, մեզանից յուրաքանչյուրը ծննդյան տոնին մի սագ է ստանում: Ես իմ բաժին դրամն ամբողջովին տվել եմ: Մնացածը ձեզ հայտնի է: Չափազանց պարտական եմ ձեզ, սը՛ր: Անհարմար է չե՞, որ իմ հասակի պատկառելի մարդը շոտլանդական գդակ ծածկի:

Նա ծիծաղաշարժ հանդիսավորությամբ գլուխ տվեց մեզ ու գնաց:

— Հենրի Բեյքըրի հետ հաշիվները մաքրած են, — ասաց Հովմար, դուռը նրա հետևից փակելով: — Միանգամայն ակներև է, որ նա թանկագին քարի մասին գաղափար էլ չունի: Դուք սովա՞ծ եք, Ուո՛տսըն:

— Այնքան էլ չէ:

— Այդ դեպքում ես առաջարկում եմ ճաշն ընթրիքի վերածել ու անհապաղ գնալ թարմ հետքերով:

— Հաճույքով:

Ցուրտ երեկո էր, սառնամանիք. մենք ստիպված եղանք վերարկու հագնել ու շարժ փաթաթել վզներիս: Անամպ պարզ երկնքում սառը փայլով շողում էին աստղերը, և անցորդների շնչառություններից առաջացած գոլորշին նման էր բազմաթիվ ատրճանակների կրակոցներից գոյացած ծխի քուլաների: Փողոցներում լսվում էին մեր հատու և թնդուն ոտնաձայները: Մենք քայլում էինք Ուիմպլստրիտով, Հարլիստրիտով. Վիզմորստիրտն անցնելով, դուրս եկանք Օքսվորդստրիտ ու քառորդ ժամ հետո Բլումբսբերիում էինք՝ «Ալֆա» պանդոկի մոտ: Դա համեստ մի ձեռնարկություն էր Հոլբորն տանող փողոցներից մեկի անկյունում: Հովմար մտավ բար և սպիտակ գոգնոց կապած կարմրաթշիկ պանդոկապետին երկու գավաթ գարեջուր պատվիրեց:

— Պետք է ենթադրել, որ դուք հրաշալի գարեջուր ունեք, եթե դա ձեր սագերից վատ չէ, — ասաց Հովմար:

— Իմ սագերի՞ց:

Պանդոկապետն ասես թե ապշեց:

— Այո՛: Կես ժամ առաջ ես զրուցում էի ձեր «սագային ակումբի» անդամ միստր Հենրի Բեյքըրի հետ:

— Հա՛... հասկանում եմ, այո՛... Բայց գիտե՞ք ինչ, սրբ, այդ սագերն իմը չեն... .

— Իսկպաե՞ս, բա ո՞ւմն են:

— Ես երկու դյուժին սագ գնեցի ԳովենտԳարդենի մի առևտրականից:

— Ի՞նչ եք ասում: Ես նրանցից ոմանց ճանաչում եմ: Իսկ ումի՞ց գնեցիք:

— Նրա անունը Բլեկինրիջ է:

— Հա՞... Ո՛չ, Բրեկլինրիջին չեմ ճանաչում: Դե, ձեր կենացը, պարոն, և ձեր ձեռնարկության բարգավաճման կենացը: Բարի գիշեր:

— Իսկ այժմ՝ միստր Բրեկլինրիջի մոտ, — ասաց Հովմար, դուրս գալով սառնամանիքին ու կոճկելով վերարկուն: — Մի՛ մոռացեք, Ուոտսըն, որ մեր շղթայի մի ծայրին ընդամենը միայն մի սագ է, իսկ մյուս ծայրին գամված է մի մարդ, որին սպառնում է յոթ տարուց ոչ պակաս տաժանակրություն, եթե մենք չապացուցենք նրա անմեղ լինելը: Ի միջի այլոց կարող է պատահել՝ մեր պրպտումները հայտնաբերեն, որ հենց նա է մեղավորը, բայց, համենայն դեպս, մեր ձեռքում է մի թել, որ դուրս է պրծել ոստիկանության ճանկից ու պատահաբար ընկել մեզ մոտ: Եկեք, ուրեմն, դրանից բռնած գնանք մինչև վերջը, ինչքան ուզում է տխուր լինի այն: Եվ այսպես, դարձ դեպի հարավ ու քայլով մարջ:

Մենք կտրեցինքանցանք Հովբորնը, քայլեցինք էնդելլատիտով և ինչոր հետնախորշերի արանքներով դուրս եկանք ՔովենտԳարդենի շուկան: Ամենամեծ կրպակներից մեկի ճակատին գրված էր «Բրեկլինրիջ»: Կրպակի տերը, որը ձիու դեմքով ու խնամքով պահածպահպանած այտամորուքներով մի մարդ էր, մի տղայի օգնում էր կրպակի փեղկերը փակել:

— Բարի երեկո. ի՞նչ սառնամանիք է, հը՞, — ասաց Հովմար:

Կրպակատերը գլխով արեց ու հարցական մի հայացք գցեց բարեկամիս վրա:

— Երևի սագերն արդեն ծախելպրծե՞լ եք, — շարունակեց Հովմար, ցույց տալով մարմարե դատարկ վաճառասեղանը:

— Եզուց առավոտ կարող եք թեկուզ հինգհարյուր հատ էլ վերցնել:

— Վաղն ինձ պետք չեն լինի:

— Ա՛յ, այն կրպակում, որտեղ լույս կա, հատուկենտ մնացել է:

— Հա, բայց ինձ ուղարկել են ձեզ մոտ:

— Այդ ո՞վ:

— «Ալֆա»ի տերը:

— Ա՛, գիտեմ: Ես նրան երկու դյուժին սագ եմ ուղարկել:

— Աննամա՛ն սագեր էին: Որտեղի՞ց էիք ձարել:

Ի զարմանս իմ, այդ հարցը խանութպանին կատաղեցրեց:

— Հապա մի պարզ ասեք, մի՛սոր, ո՞ւմ պարտեզն էք քար գցում, — ասաց նա գլուխը բարձրացնելով ու թևերը կանթելով: — Խոսենք առանց սար ու ձոր ընկելու, պարզ. . .

Բավականաչափ պարզ եմ խոսում: Ես կուզենայի իմանալ, թե ո՞վ է ծախում այն սագերը, որ դուք մատակարարում եք «Ալֆա»ին:

— Իսկի էլ չե՛մ ասի:

— Չեք ասի՝ մի՛ ասեք, մի կարևոր բան է, էլի: Հետաքրքիր է, թե այդպիսի դատարկ բաներից ինչո՞ւ եք տաքանում:

— Տաքանո՞ւմ եմ: Դուք էլ որ իմ տեղը լինեիք, կտաքանայիք, եթե այդպես զահլաներդ տանեին: Լավ ապրանքին լավ փող եմ տալիս, պրծավ գնաց. ի՞նչ «հայ որտեղ են սագերը», «հայ ումից եմ գել», «ում եք ծախել» և «ինչքան փող կվերցնեք ձեր սագերի համար»: Ոնց որ թե այդ սագերով է աշխարհը շինվել, այնպիսի աղմուկ եք բարձրացել. . .

— Ես այն մարդկանցից չեմ, որ ձանձրացնում են ձեզ իրենց հարցերով, — անփույթ ասաց Հովսեփ: — Չեք ուզում՝ մի՛ ասեք: Բայց ես թռչունից բան հասկանում եմ և հինգ ֆունտ ստերլինգի վրա գրագ եմ եկել, թե այն սագը որ կերա, գիրացրել են գյուղում:

— Ուրեմն, կորանգնացին ձեր ֆունտե՛րը: Որովհետև դա քաղաքի սագ էր, — վրա տվեց կրպակատերը:

— Չի կարող պատահել:

— Իսկ ես ասում եմ ձեզ՝ քաղաքի սագ էր:

— Ոչ մի կերպ չեմ հավատա:

— Չլինի՞ կարծում եք, թե դուք ինձանից շատ բան եք հասկանում այս գործում, չնայած որ ես համարյա թե բարուրից սկսած զբաղվում եմ դրանով: Ձեզ ասում եմ, որ «Ալֆա»ին ծախած բոլոր սագերն էլ ոչ թե գյուղում են պահվել, այլ քաղաքում:

— Դուք ինձ երբեք չեք ստիպի հավատալ այդպիսի անմտությանը:

— Ուզո՞ւմ եք գրագ գալ:

— Դա նշանակում է ուղղակի վերցնել ձեր փողը: Ես չեմ կասկածում, որ ճիշտ եմ: Բայց համաձայն եմ սովերեն դնել միայն այն պատճառով, որպեսզի դաս տամ ձեզ ձեր համառության համար:

Սագավաճառը մոայլ քմծիծաղ տվեց:

— Բի՛լլ, մի դեսը տուր մատյանները, — ասաց նա:

Պատանյակը երկու մատյան բերեց. մեկը բարակ, իսկ մյուսը հաստ ու մեծ, ճարպոտած. բերեց ու դրեց վաճառասեղանի լամպի լույսի տակ:

— Դե՛, մի՛ստր Վիճոդ, — ասաց կրպակի տերը, — ես կարծում էի, թե այսօր բոլոր սագերը ծախել եմ. բայց աստվածն իմ կրպակն ուղարկեց մի սագ նա: Տեսնո՞ւմ եք այս փոքրիկ մատյանը:

— Հետո՞ ինչ:

— Մա այն մարդկանց ցուցակն է, ումից ես ապրանք եմ գնում, տեսնո՞ւմ եք: Ա՛յ, այստեղ, այս էջում՝ գյուղական մատակարարողների անուններն են, իսկ ամեն ազգանուցից հետո դրված թիվը ցույց է տալիս մեծ մատյանի այն էջը, որտեղ նրանց հաշիվներն են գրանցվում: Իսկ կարմիր թանաքով գրոտած այս էջը տեսնո՞ւմ եք: Այստեղ քաղաքային մատակարարողներին ցուցակն է: Հապա մի նայեք երրորդ ազգանվանը. բարձրաձայն կարդացեք:

— «Միսսիս Օկշոտ, Բրիքստոնրոդ 117, էջ 249», — կարդաց Հոլմսը:

— Միանգամայն ճիշտ է: Հիմի բացեք մեծ մատյանի 249 էջը:

Հոլմսը բացեց նշված էջը:

— Ահա. «Միսսիս Օկշոտ, Բրիքստոնրոդ 117. վայրի թռչուններ ու ձվեր մատակարարողուհի»:

— Իսկ ի՞նչ է ասում վերջին գրանցումը:

— «Դեկտեմբեր, քսաներկուսին. քսանչորս սագ՝ հատը յոթ շիլինգ վեց պենս»:

— Ճիշտ է. միտքներդ պահեք դա: Իսկ դրա տա՞կը:

— «Ծախված են միստր Վինդիգետին, «Ալֆա», հատը տասներկու շիլինգով»:

— Հը՛, ի՞նչ կասեք հիմա:

Թվում էր, թե Շերլոկ Հոլմսը շատ վշտացած էր: Նա գրպանից հանեց սովերենը, նետեց վաճառասեղանին, շուտ եկավ ու անխոս, տխուրատրտում դուրս գնաց: Մի քանի մետր անցնելուց հետո, նա կանգ առավ լապտերի տակ և ծիծաղեց իրեն հատուկ՝ զվարթ ու անձայն ծիծաղով:

— Եթե դուք տեսնեք մի մարդու՝ այդպիսի բեղերով ու այդպիսի կարմիր թաշկինակը գրպանում, կարող եք դուրս քաշել նրանից ինչ ուզենաք, առաջարկելով նրան ուզածդ գրազը, — ասաց բարեկամս: — Ես պնդում եմ, որ հարյուր ֆունտով էլ ինձ երբեք չէր հաջողվի նրանից իմանալ այնքան մանրամասն տեղեկություններ, ինչ որ ստացա գրագ գալով: Այսպիսով, Ուոֆ տարն, ինձ թվում է, որ մենք գրեթե մինչև վերջը քանդեցինք հանելուկային կծիկը: Միակ բանը, որ մնաց որոշելու, այն է. այդ միսսիս Օկշոտի մոտ մենք կգնանք հիմա, թե՞ մեր այցելությունը կհետաձգենք մինչև առավոտ: Այն գոեհիկի ասածից պարզ երևում է, որ այդ գործով, բացի մեզանից, հետաքրքրվում է էլի ինչոր մեկը, և ես. . .

Մեր հենց նոր այցելած կրպակից հանկարծակի լսվող աղմուկը չթողեց, որ Հոլմսը խոսքն ավարտի: Եվ նայելով ճոճվող լամպի դեղին լույսի մեջ տեսանք մի կարմրադեմ, փոքրամարմին մարդուկի: Իսկ Բրեկինրիջը կանգնել էր կրպակի դռների միջև ու նրա քթի առջև կատաղորեն թափահարում էր բռունցքները:

— Հերի՛ք է գլուխս տանեք ձեր սագերով, — բղավում էր Բրեկինրիջը: — Ռադ եղեք բոլորդ գրողի ծոցը: Մեկ էլ որ ձեր քիթը խոթել եք այստեղ ու հիմարհիմար հարցեր եք տվել, կապած շունս բաց կթողնեմ ձեզ վրա: Բերեք այստեղ միսսիս Օկշոտին, նրան էլ պատասխան կտամ: Իսկ դո՞ւք այստեղ ինչ գործ ունեք: Ձեր սագե՞րն եմ առել, ինչ է:

— Չե՛, բայց դրանցից մեկն իմն է ախր, — թնկթնկաց մարդուկը:

— Դե՛, ուրեմն միսսիս Օկշոտից էլ ուզեք ձեր սագը:

— Նա պատվիրեց, որ ձեզանից իմանամ:

— Ուզում եք պրուսական թագավորների՛ց իմացեք. . . Հերի՛ք է ինչքան տանջեցիք ինձ, բավակա՛ն է: Քաշվեք կորեք այստեղից. . .

Նա կատաղած խոյացավ առաջ, և մարդուկը արագ անհետացավ խավարում:

— Ըհը՛, կարծես թե մենք ստիպված չենք լինի գնալու Բրիկստոնբորո, — շնչաց Հոլմսը: — Մի գնանք տեսնենք՝ պետք չի՞ գա մեզ արդյոք այդ արարածը:

Մի կերպ անցնելով բերանբացների խմբերի միջով, որ թափառում էին լուսավորված կրպակների շուրջը, բարեկամս արագ հասավ մարդուկին ու ձեռքը դրեց նրա ուսին: Մարդուկը թափով շուռ եկավ, ու գազային լապտերի լույսի ներքո ես տեսա, որ նա խիստ գունատվեց:

— Ո՞վ եք դուք, ի՞նչ եք ուզում, — հարցրեց նա դողդոջուն ձայնով:



— Ներեցեք ինձ, — մեղմ ասաց Հովմար, — բայց պատահաբար լսեցի, թե դուք ինչ հարց տվիք այն կրպակատիրոջը: Ես կարծում եմ, որ կարող եմ օգտակար լինել ձեզ:

— Դո՞ւք: Ո՞վ եք դուք: Ո՞նց կարող էիք իմանալ, թե ինչ է պետք ինձ:

— Իմ անունը Շերլոկ Հոլմս է: Զբաղմունքս է՝ իմանալ այն, ինչ ուրիշները չգիտեն:

— Բայց ինձ պետքական բանի մասին դուք ոչինչ չեք կարող իմանալ:

— Խնդրում եմ ինձ ներեք, բայց ես ամեն ինչ գիտեմ: Դուք փորձում եք գտնել այն սագերի հետքը, որ Բրիքստոնկոդից միասիւ Օկշոտը վաճառել է Բրեկլինրիջ անունով սագավաճառին, որը ծախել է միստր Վինդիգետին՝ «Ալֆա» պանդոկի տիրոջը, իսկ սա էլ իր հերթին՝ իր «սագային ակումբին», որի անդամն է հանդիսանում Հենրի Բեյքըրը:

— Օ՛, սը՛ր, դուք հենց այն մարդն եք, որին ես ծարավի եմ հանդիպելու, — գոչեց մարդուկը, պարզելով դողդողացող ձեռքերը: — Ես պարզապես չեմ կարող արտահայտել, թե այդ բոլորը որքա՛ն է կարևոր ինձ համար:

Շերլոկ Հոլմսը կանգնեցրեց այտեղով անցնող մի կառք:

— Այդ դեպքում ավելի լավ է խոսել հարմար ու տաք սենյակում, քան այստեղ՝ շուկայի այս քամոտ հրապարակում, — ասաց նա: — Բայց նախքան ճանապարհվելը, ասացեք ինձ, թե այս ո՞ւմ եմ հաճույքով օգնություն ցույց տալիս ուժերիս ներածին չափ:

Մարդուկը մի ակնթարթ տատանվեց:

— Իմ անունը Ջոն Ռոբինսոն է, — ասաց նա, խուսափելով ուղիղ նայելուց:

— Ո՛չ, ո՛չ, ի՞նչ է ձեր իսկական անունը, — սիրալիր ասաց Հովմար: — Միշտ ավելի հարմար է գործել սեփական անունով:

Անձանոթի գունատ այտերը խիստ կարմրեցին:

— Այդ դեպքում, — ասաց նա, — իմ իսկական անունը Ջեյմս Ռայդը է:

— Ա՛յ, դա ճիշտ է: Դուք ծառայում եք «Կոսմոպոլիտեն» օտելում: Նստեցեք խնդրեմ կեբը, և շուտով ես կպատմեմ ձեզ այն բոլորը ինչ կուզեք իմանալ:

Փոքրիկ մարդը տեղից չէր շարժվում, նայում էր մերթ մեկիս, մերթ մյուիս, և նրա աչքերում հույսին փոխարինում էր վախը: Երևում էր, որ նա չգիտե՛ իրեն

դժբախտությունն է սպասում, թե մի մեծ երջանկություն: Վերջապես նա նստեց կառքը և կես ժամ հետո մենք արդեն Բեյքրաստրիտի տան հյուրասենյակում էինք:

Ճանապարհին ոչ մի խոսք չարտասանվեց: Մակայն մեր ուղեկիցն այնքան բարձրաձայն էր շնչում, այնքան պինդ էր սեղմում ու բացում ափերը, որ առանց խոսքի էլ պարզ էր. նա ջղային գրգռվածության մեջ էր:

— Ահա և մենք տանն ենք, — զվարթ ասաց Հովմար: — Ի՞նչը կարող է այս եղանակին ավելի լավ լինել, քան բոցավառվող բուխարիկը: Կարծեմ դուք մրսեցիք, մի՛ սոր Բայդրը: Նստեցեք խնդրեմ, այս հյուսաթոռին: Ես ոտքերս զցեմ տնային մաշիկներս, ու մենք անմիջապես կգրադվենք ձեր գործով: Ըհը . . . Դուք ուզում եք իմանալ, թե ինչ եղան այն սագե՞րը:

— Այո՛, սը՛ր:

— Ավելի ճիշտ այն սագը, չէ՞: Իմ կարծիքով ձեզ հետաքրքրում է նրանցից միայն մեկը՝ սպիտակը, որի պոչին սև շերտ կար:

Բայդրը հուզմունքից դողդողաց:

— Օ՛, սը՛ր, — բացականչեց նա: — Կարո՞ղ եք ասել, թե որտե՞ղ է գտնվում այդ սագը:

— Նա այստեղ է:

— Այստե՞ղ:

— Այո՛: Դա արտակարգ մի սագ դուրս եկավ: Եվ զարմանալի չէ, որ դուք այդքան հետաքրքրվում եք նրանով: Մահից հետո նա մի ձու ածեց, գեղեցիկ, շողշողուն, երկնագույն մի ձու: Այդ ձուն այստեղ է՝ իմ թանգարանում:

Մեր այցելուն երեքավով վեր կացավ ու աջ ձեռքով կառչեց բուխարիկի տախտակից: Հովմար բացեց անկիզբի պահարանը և այնտեղից հանեց երկնագույն կարբունկուլը, որ շողշողում էր աստղի նման, սառը, պայծառ ու երփներանգ լույսով: Բայդրը կանգնել էր այլակերպված դեմքով, չիմանալով՝ պահանջե՞լ արդյոք այդ քարը, թե՞ հրաժարվել դրան տիրանալու բոլոր իրավունքներից:

— Խաղը տանուլ տվիք, Բայդր, — հանգիստ ասաց Շերլոկ Հովմար: — Պինդ կանգնեցեք, թե չէ կրակի վրա կընկնեք: Ուո՛տարն, օգնեցեք նրան՝ թող նստի: Նա դեռևս այնքան ուժ չունի, որ սառնարյուն կերպով խարդախություն անի: Մի կում օղի տվեք նրան: Այդպես: Հիմա նա մի փոքր նման է մարդու: Այ թե խղճուկ միջատ է, հա . . .

Ռայդըրը երեքաց ու քիչ էր մնում ընկնի հատակին, բայց օղին նրա այտերին թեթև մի կարմրություն առաջացրեց, և նա նստեց, ահով նայելով իրեն մերկացնողի դեմքին:

— Ես գրեթե ամեն ինչ գիտեմ, և իմ ձեռքում են համարյա բոլոր ապացույցները. դրա համար էլ ձեզ հարկ կլինի քիչ բան ավելացնել: Մակայն այդ քիչը դուք պետք է պատմեք հենց հիմա, որպեսզի գործի մեջ ոչ մի մույթ տեղ չմնա: Որտեղի՞ց իմացաք կոմսուհի Մորկարի այս երկնագույն կարբունկուլի մասին, Ռայդըր:

— Ինձ դրա տեղն ասաց Կետերին Կյուզեկը, — պատասխանեց նա դողդողացող ձայնով:

— Գիտեմ, նորին պայծառափայլության նաժիշտը: Եվ հեշտ եկամուտի գայթակղությունը չափից անց ուժեղ եղավ ձեզ համար, ինչպես շատ անգամ պատահել է նաև ավելի պատվարժան մարդկանց հետ: Եվ դուք միջոցների մեջ խտրություն չդրիք: Ինձ թվում է, Ռայդըր, որ դուք ընտիր սրիկա կդառնայիք: Դուք գիտեիք, որ այդ գողող Հորները մի անգամ արդեն բռնվել է գողության մեջ և որ ամենից առաջ նրան կկասկածեն: Իսկ ի՞նչ արեցիք դուք: Դուք և ձեր մեղսակցուհի Կյուզեկը կոտրեցիք կոմսուհու սենյակի բուխարիկի ցանցաձողն ու այնպես արեցիք, որ հասկապես Հորները գնա անհրաժեշտ նորոգումը կատարելու: Հորները գնաց, դուք պատյանից գողացաք քարը, տագնապ բարձրացրիք, և խեղճ մարդուն ձերբակալեցին: Դրանից հետո. . .

Այս խոսքերի վրա, Ռայդըրը հանկարծակի սողալով ընկավ գորգին և գույգ ձեռքով գրկեց բարեկամիս ծնկները:

— Աստճճճ սիրուն, խղճացեք ինձ, — աղաղակեց նա: — Մտածեցեք իմ հոր մասին, իմ մոր մասին: Այդ լուրը կսպանի նրանց: Ես երբեք գողություն չեմ արել, երբե՛ք: Դա չի կրկնվի, երդվո՛ւմ եմ: Ես երդում կտամ ձեզ աստվածաշնչով: Օ՛, մի՛ հասցրեք այդ գործը մինչև դատարան: Ի սե՛ր Քրիստոսի, դատի մի՛ հասցրեք այս գործը:

— Քաշվեք ձեր տեղը, — խստորեն ասաց Հոլմսը: — Լա՛վ եք հիմա սողում ու գալարվում: Իսկ ի՞նչ էիք մտածում այն ժամանակ, երբ Հորներին ուղարկում էիք դեպի մեղադրյալների աթոռը այն հանցանքի համար, որի մեջ նա մեղք չունի:

— Ես կարող եմ փախչել, մի՛սոր Հոլմս: Կհեռանամ Անգլիայից, սը՛ր: Այն ժամանակ մեղադրանքը կվերանա Հորների վրայից. . .

— Հը՛մ. . . Մենք դեռ կխոսենք դրա մասին: Իսկ հիմա լսենք ճշմարտացի պատմությունն այն մասին, թե ինչ պատահեց գողությունից հետո: Ինչպես եղավ, որ

թանկագին քարն ընկավ սագի փորը և ինչպես այդ սագը ընկավ շուկա: Պատմեցեք ճշմարտությունը: Քանի որ ճշմարտությունը ձեզ համար փրկության միակ ուղին է:

Ռայդըրը լիզեց չորացած շրթունքները:

— Ես կպատմեմ ամբողջ ճշմարտությունը, — ասաց նա: — Երբ Հորնեթին ձերբակալեցին, ես տեսա, որ ավելի լավ է քարը տանեմ մի ուրիշ տեղ, քանի դեռ ոստիկանությունը գլխի չի ընկել խուզարկելու ինձ ու իմ սենյակը: Հյուրանոցում հարմար տեղ չկար, որպեսզի քարը պահեի: Իբր թե հիմնարկի գործով, ես դուրս եկա և ուղևորվեցի դեպի քրոջս տունը: Նա ամուսնացած է ոմն Օկոտտի հետ, ապրում է Բրիքստոնրոդում և շուկայի համար տնային թռչուններ գիրացնելով է զբաղվում: Ամեն մի պատահական անցորդ ինձ ոստիկան կամ խուզարկու էր թվում և, չնայած ցուրտ երեկոյին քրտինքը ջրի նման հոսում էր դեմքիցս, մինչև որ հասա Բրիքստոնրոդ: Քույրս հարցրեց, թե ինչ է պատահել և ինչու եմ այդպես գունատ: Ես պատասխանեցի, որ ինձ հուզել է մեր օտելում կատարված գողությունը: Հետո անցա տան հետևի բակը, ծխամորձս վառեցի ու սկսեցի մտմտալ, թե ինչ անեմ:

Ես մի մտերիմ ընկեր ունեի, անունը Մոդալի, որը ճիշտ ճանապարհից շեղվել էր ու պատժի ժամկետն անցկացրել Պենտոնվիլի բանտում: Մի օր մենք հանդիպեցինք, խոսք բաց արինք գողերի մասին, և նա ինձ պատմեց, թե ինչպես են նրանք սաղացնում գողացածը: Ես գիտեի, որ նա ինձ չի մատնի, որովհետև ինքս նրա որոշ մեղքերն իմանում էի, և դրա համար էլ որոշեցի ուղիղ գնալ նրա մոտ՝ Կիլբուրն ու նրան վստահել իմ գաղտնիքը: Նա կտվորեցներ ինձ, թե այդ քարն ինչպես փող դարձնեմ: Բայց ինչպե՞ս հասնել նրա տունը: Ես մտաբերեցի այն տառապանքները, որ քաշեցի օտելից դուրս գալուց հետո: Ամեն բոպե ինձ կարող էին բռնել, խուզարկել ու բաճկոնիս գրպանում գտնել այդ քարը: Պատին հենված կանգնել ու նայում էի սազերին, որոնք օրորվելով թափառում էին ոտքերիս մոտ: Եվ հանկարծ գլխումս մի միտք ծագեց, թե ինչպես կարելի է խաբել աշխարհի ամենաճարպիկ խուզարկուին. . .

Մի քանի շաբաթ առաջ քույրս ասել էր, որ ծննդյան տոնի առթիվ իրենից նվեր կատանամ ամենաընտիր սագը. իսկ ես գիտեի, որ նա իր խոսքի տերն է: Ես որոշեցի հենց այդ բոպեին վերցնել սագն ու նրա մեջ քարը տանել մինչև Կիլբուրն: Բակում ինչոր սարայ կար և այդ շինության հետևը քշեցի խոշոր, շատ լավ մի սագ, որն սպիտակ էր, շերտավոր պոչով: Բռնեցի այդ սագը, կտուցը բաց արի ու քարը խոթեցի կոկորդը՝ որքան կարելի է խոր: Սագը կուլ տվեց քարը, և ես ձեռքով զգացի, թե ինչպես դա սահեց ու ընկավ նրա քուրջը: Բայց սագը թայրտում էր ու թևերը թափթափ անում. քույրս դուրս եկավ իմանալու, թե ինչ է եղել: Երբ ես շուտ եկա նրա կողմը, որպեսզի պատասխանեմ, անպիտան սագը ձեռքիցս դուրս պրծավ ու խառնվեց երամին:

«Այդ ի՞նչ արիր թռչունին, Ջեյմս», — հարցրեց քույրս:

«Գիտե՞ս ինչ, ասացի, — դու ասել ես, որ ծննդի տոնին մի սագ կնվիրես ինձ. ես էլ տնտղում էի, թե սրանցից որն է ավելի գերը»:

«Հա՛, — ասաց քույրս, — մենք քեզ համար արդեն ընտրել ենք: Մենք այդպես էլ անվանել ենք «Ջեյմսի սագը»: Ա՛յ, այն մեծն է, ամբողջովին սպիտակ: Ընդամենը քսանվեց սագ ունենք, որոնցից մեկը քեզ համար է, մեկը՝ մեզ, իսկ երկու դյուժինը վաճառելու»:

«Շնորհակալ եմ, Մե՛զգի, — ասացի, — բայց եթե քեզ համար միևնույն է, տուր ինձ այս սագը, որ ես հենց հիմա բռնել էի»:

«Քոնը դրանից ծանր է առնվազն մի երեք ֆունտով, և մենք նրան գիրացնում էինք հատկապես քեզ համար»:

«Դա ոչ մի նշանակություն չունի: Ես ուզում եմ հենց այն սագը և ուզում եմ հենց այսօր տանել հետս»:

«Քո գործն է, — ասաց քույրս մի քիչ նեղացած: — Իսկ ո՞րն էիր ուզում վերցնել»:

«Ա՛յ, այն սպիտակը, որ պոչին սև շերտ կա. . . Ահա նա, երամի մեջտեղն է»:

«Խնդրեմ, մորթիր ու տար»:

Հենց այդպես էլ արեցի, մի՛ստր Հոլմս, և թոչունը տարա Կիլբորն: Ընկերոջս ամեն ինչ պատմեցի. նա այն մարդկանցից է, որին հեշտ է պատմել նման բաներ: Նա այնքան քրքջաց, որ հալից ընկավ: Հետո մենք վերցրինք դանակն ու սագը կտրատեցինք: Երբ ես տեսա, որ քարը չկա և որ սարսափելի սխալ է տեղի ունեցել, սիրտս կանգ առավ: Մագը թողեցի, վազեցի քրոջս տուն ու թռա տան հետևի բակը: Բակում ոչ մի սագ չկար:

«Որտե՞ղ են սագերը, Մե՛զգի», — ճվացի ես:

«Ուղարկել եմ խանութպանին»:

«Ո՞ր խանութպանին»:

«Բրեկինրիջին, Կովենըհարդեն»:

«Իսկ սագերի մեջ շերտավոր պոչով մեկն է՞լ կար. ճիշտ նրա նման, որ հենց նոր մորթեցի», — հարցրի ես:

«Այո, Ջե՛յմս, շերտավոր պոչերով երկուսն էին, ու ես միշտ շփոթում էի նրանց»:

Այդտեղ, իհարկե, ես ամեն ինչ հասկացա ու ոտքերումս ինչքան ուժ կար, սլացա այդ Բրեկինրիջի մոտ: Բայց նա բոլոր սագերին արդեն ծախել էր ու ոչ մի կերպ չէր ուզում ասել, թե ում: Դուք ինքներդ լսեցիք, թե ինչքան կոպիտ պատասխանեց նա ինձ: Քույրս կարծում է, թե ես խելքս թոցրել եմ: Երբեմն ինձ էլ է թվում, որ ես խելագար եմ: Եվ ահա. . . և ահա՝ ես ստոր մի գող եմ, չնայած որ ձեռք էլ չեմ տվել հարստությանը, որի պատճառով խորտակեցի ամբողջ կյանքս: Տե՛ր աստված, օգնի՛ր ինձ, տե՛ր աստված, օգնի՛ր. . .

Նա ձեռքերով ծածկեց դեմքն ու ջղաձգորեն հեկեկաց: Տիրեց երկար լռություն, որն ընդհատվում էր միայն Ռայդրրի ծանր հառաչանքներով ու մեկ էլ բարեկամիս մատների համաչափ կտկտոցով՝ սեղանի եզրին: Հանկարծ Շերլոկ Հոլմսը ոտքի կանգնեց ու կրնկի վրա բացեց շքամուտքի դուռը:

- Կորեք գնացե՛ք, — արտասանեց նա:
- Ինչպե՞ս թե, սը՛ր. . . Օ՛, աստված ձեզ օրհնի. . .
- Էլ ոչ մի խոսք. հեռացե՛ք այստեղից:

Կրկնելու կարիք չեղավ: Սանդուղքի վրա դորդացին սրընթաց քայլեր, ներքևը շրխկաց դուռը, և փողոցից արագ թփթփթոց լսվեց:

— Վերջ ի վերջո ես աշխատում եմ ոչ նրա համար ամեննին, որ դրստեմ մեր ոստիկանության վրիպումները, Ուո՛տսըն, — ասաց Հոլմսը, ձեռքը տանելով դեպի կավե ծխամորճը: — Հորներին որ վտանգ սպառնար, ուրիշ բան: Բայց Ռայդրրը նրա դեմ ցուցմունք չի տա ու գործը կմոռացվի: Հնարավոր է, որ ես սրիկայի պաշտպան եմ դառնում. բայց, ավելի ճիշտը՝ մարդուն փրկում եմ վերջնական խորտակումից: Այս կտրիճին է՛լ այսպիսի բան չի պատահի. նա չափից անց վախեցած է: Կյանքը մեզ հանդիպեցրեց տարօրինակ ու զվարճալի մի առեղծվածի: Այդ առեղծվածի լուծումն ինքնին պարզն է: Եթե այնքան բարի լինեք, որ զանգը քաշեք, մենք կզբաղվենք մի նոր «հետազոտությամբ», որի մեջ գլխավոր դերը դարձյալ թոչուն է խաղալու. մի՛ մոռացեք, որ ճաշին մենք կաքավ ենք ուտելու:

1. Կարբունկուլ — կիսաթափանցիկ թանկագին քար, սովորաբար կարմիր:
2. Գրան — գեղարանային հին չափ, որը հավասար է 0, 0622 գրամի (Օ.

թ.):